

## Հաղորդագրություն

**2020 թվականի հուլիսի 31-ին կայանալիք Դատավորների ընդհանուր ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրության վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի կարգավորումների ուժով՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից սույն թվականի հուլիսի 9-ին ծանուցագրեր են ուղարկվել Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամ ընտրվելու իրավունք ունեցող Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 9 դատավորի:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատից ստացվել է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թեկնածուների 6 դիմում՝ իրենց անունները քվեաթերթիկում չներառելու մասին:

Դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրության քվեաթերթիկում ներառվել է ներքոնշյալ՝ 3 դատավորի անուն.

Հ/հ	<b>Թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, դատարանի անվանումը, դատավորի մասնագիտացումը</b>
1.	<b>Անտոնյան Սուրեն Ռաֆիկի</b> (Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ)
2.	<b>Հակոբյան Գոռ Գագիկի</b> (Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ)
3.	<b>Միքայելյան Ստեփան Կարոյի</b> (Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ)